26. ՆԱՒԱԿՆԵՐԸ

Նաւակներ մեկնեցան ամէնն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամէնն ալ՝ ծըփանուտ Երազիս ափունքէն.
Անձուկին բոցը զիս պաշարե՜ց. Ըսպասման Հիւա՜նդն եմ.
Հոգեսարս դողերով եւ հուրքով միշտ ցայգերն են յըղի.
Գիշերներն ես համբուն կըսպասեմ ծիրանի այն դարձին.
Ու ցայգուն ալ կ'անցնիմ աւազուտ ափունքէն՝ դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլըցուն:
Դարձուցէ՜ք նաւակներս հողմավար, ջրանո՜յշ պայիկներ,
Դարձուցէ՜ք նաւակներս դիւթավար, իրիկուա՜ն հովիկներ...

27. ՄԵՂՈՒՆԵՐԸ

Տենչանքներըս, տարագնացի՜կ մեղուներ,
Ոսկի երիզ մը բանալով
Ու զանակներ անձրեւելէն
Թըռան գացին երամ երամ.
Անցան գացին դարուղիէն,
Կիսաթափանց մըշուշներու ապրշում քօղքը պատռելէն
Եւ յածելէն մէջն արեւին ոսկեծաղիկ մառախուղին:

Արեւակի, սուտակներու ու զիւմրիւթի
Փաղփուն երանգը ծըծելով իրենց չորս դին.
Ծործորներէն, բացավայրէն
Ու ցորենի գաղիշներէն անցան անդին.
Ես գետափին մօտ մընացի վարատակա՜ն,
Մելամաղձիկ երազս յըղած
Դէպ հեռաւոր ծաղկաստաններ՝
Ուր թառեցան մեղուներն իմ տենչանքներուս:

Մեղուներն իմ տենչանքներուս՝
Միջօրեքի պահերէն վերջ,
Որոնց դարձին ես կըսպասեմ[a]
Ուղեկորոյս զակատելով:
Ահա՜ օրն ալ մըթագնեցաւ,
Եւ ես ի զո՜ւր տարաժամ
Դեռ կըսպասեմ անոնց հեւքոտ ու մեղրազօծ վերադարձին: